ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 3, 1964 Общественные науки

Լ. Ս. Դալոյան

ՍԻՊԻԼԻ ՊՈԵԶԻԱՆ

Սիպիլի գրական, հասարակական, մանկավարժական գործունեությունն սկսվում է 19-րդ դարի 80-ական թվականներից և շարունակվում մինչև 20-րդ դարի 30-ական թվականները։ Շուրջ կես դար տևող բազմաբովանդակ ու եռանդուն գործունեության ընթացքում նա զգալի դեր է խաղացել արևմտահայ հասարակական, մտավորական կյանքի առաջընթացի մեջ։

Սիպիլը դասագրքերի, բազմաթիվ մեթոդական-մանկավարժական, հրապարակախոսական հոդվածների հեղինակ է։ Նրա կազմած «Քերականություն արդի աշխարհաբարի» և «Թանգարան» հատընտիր հատորները, որոնք հետագայում բարեփոխել և վերահրատարակել է Հրանտ Ասատուրի հետ համատեղ ուժերով, քառորդ դարից ավելի եղել են արևմտահայ վարժարանների հայերեն դասագրքերը։ Իրեն նվիրելով արևմտահայ մատաղ սերնդի դաստիարակության գործին, Սիպիլը դեռևս 1879 թ. հիմնել է «Ազգանվեր հայուհյաց» ընկերությունը, որն իր առջև խնդիր էր դրել նպաստել կրթական և դաստիարակչական խնդիրների իրագործմանը։ Մեկ ու կես տասնամյակ գործելուց հետո, սուլթան Համիդի կազմակերպած ջարդի տարիներին (1895—96), ընկերությունը փակվեց, հետագայում՝ 1908 թ., դարձյալ Սիպիլի ջանքերով, ընկերությունը վերսկսեց իր գործունեությունը։

Սիպիլը օժտված էր նաև գրական տաղանդով։ Նա գրել է վեպեր, պատմվածքներ, նորավեպեր, թատերախաղեր, բանաստեղծություններ, առակներ, օրօրոցային և մանկական ոտանավորներ։

Սիպիլը ճանաչված բանաստեղծուհի է, ետդուրյանական շրջանի քնարերգության տաղանդավոր ներկայացուցիչներից մեկը։ Նրա բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն տպագրվել է 1902 թ. Պոլսում «Ցոլքեր» խորագրով։ Այդ բանաստեղծությունները տոգորված են հուզումով, անձնական, երբեմն էլ համամարդկային թախծի արտահայտություններով։ Վրթանես Փափազյանը իրավացիորեն գտնում է, որ այդ թախիծը կուտակվել է միջավայրի ճնշող ազդեցությունից, շրջապատող կյանքի հանգամանքների բարդումից։ Սիպիլի քերթվածներն արտահայտում են կյանքի և սիրո անուրջները, վայելքներն ու տվայտանքները։ Զգայուն բանաստեղծուհին օժտված էր զգացմունքների և երևակայության մեծ ուժով։ Նրա ինքնատիպ երգերն ազնիվ զգացմունքների և վառ երազանքների արտահայտություններ են։

Սիպիլը սակավաթիվ այն գրողներից է, որ թեև ապրեց 80-ական թվականների տաճկական ռեակցիայի հեղձուցիչ պայմաններում, տեսավ Համիդյան արյունալի կոտորածը, ունեցավ հոգեկան ծանր հուսահատություն, բայց չկորցրեց իր հայրենիքի և ժողովրդի լուսավոր ապագայի հավատը։ Նրա հոգում և երևակայության մեջ մշտապես ապրել է Հայաստանը և հավատը նրա ապագայի նկատմամբ։ Բանաստեղծուհին ոգեկոչում է նախնիների հերոսական անցյալը և նա ցանկանում է հոգու բոցերով անցյալի «մոխիրն նորեն գոնե

կայծ մը հրրահրի»։ Կյանքի հրճվանքները, սերը, վայելքները չեն հրապուրում ժողովրդի ճակատագրով ապրող բանաստեղծուհուն.

Ճակատս ըլլա նույնիսկ փառքով լուսապանծ,
Ինծի համար մեծ հույզեր չեն,
Զի իմ հոգվույս մեջ կը ննջեն
Հայրենիքիս ցավերն անհուն ու անանց։

Սիպիլի հոգում խոր արմատներ են ձգել մեծ հայրենասերի՝ Նալբանդյանի կերպարը։ Համարձակ, անձնազոհ մարտիկին դարձնելով իր երգի գլխավոր հերոսը («Հերոսը»), նա Նալբանդյանի օրինակով պատկերում է անձնուրաց մարտիկին, որը, չնայած հեռու է «լուսածագը», խորն ու վսեմ գաղափարների, ազգի ազատագրման համար է մարտնչում։ Բանաստեղծուհին փառաբանում է հերոսի անցած ուղին, արտահայտում իր ջերմ վերաբերմունքը դեպի մարդկային կյանքի բարձրագույն իդեալը՝ ազատությունը ձգտող մարտիկը.

Միշտ աննրկուն կռվեցար։

. . . . . .

Ազգիդ տվիր գալար ուժերը կյանքիդ,
Ու խամրեցար որ անոր հույսը ծաղկի։

Հայրենասիրական վառ զգացմունքների լավագույն արտահայտություն է «Հայ լեզվին» բանաստեղծությունը։ Դա հերոսական կյանքի երգն է մեր այն նախնիների, որոնք բազում անգամ տառապելով օտարի լծի տակ, մոռացել են իրենց զավակներին, իրենց անձը, բայց չեն մոռացել մայրենի լեզուն, գուրգուրանքով պահպանել են այն և հաղորդել սերունդներին։

Սիպիլի գործերում արտահայտվել է պանդուխտ հայի դառնություններով լի կյանքի նկարագիրը։ Պոլսում, ուր ապրում էր բանաստեղծուհին, անթիվ էին հայ պանդուխտ մշակները։ Ավերումից ծայր առած տարագրությունը Պոլիսը լցրել էր հազարավոր պանդուխտ հայերով, որոնք գլխավորապես ֆիզիկական աշխատանքով ապահովում էին իրենց չարքաշ կյանքը։ Բանաստեղծուհուն տանջում էր հայրենի երկրի ու թշվառ ժողովրդի վիճակը և պատահական չէ, որ նրա առաջին տպագիր գործը նվիրված էր պանդուխտ հայի ճակատագրին։ Դեռ ճեմարանի ուսանողուհի էր ապագա բանաստեղծուհին, որ «Հայրենիք» օրաթերթում (1874 թ.) տպագրեց «Պանդուխտ անմխիթար» բանաստեղծությունը։ Չնայած դա Նար-Պեյի մի բանաստեղծության շարունակությունն էր, բայց ինքնուրույն տողերում բանաստեղծուհին ականատեսի աչքերով նկարագրեց պանդուխտ հայի ողբերգություններով լի կյանքը։ «Հրաժեշտն ու դարձը» քերթվածը, որը հետագայում «Ցոլքեր» ժողովածուում վերնագրվեց «Սոսին տակ», պանդուխտ հայի բնտանիքի քայքայման ողբերգական մի պատկեր է։

Սիպիլն ականատես եղավ թուրքական յաթաղանին հպարտավոր հայերի դեմ դառնալուն, լսեց մարդասպանի սրից առաջացած «լայլյուններ ցավի ճիչեր գիշեր ցերեկ», անօգնական ու ահաբեկված ամբոխի աղաղակներ («Տեսիլներ»)։ Բանաստեղծուհին նկարագրում է կոտորածի զարհուրելի պատկերը, ցույց տալիս արտորված մերկ ու խոշտանգված կանանց ու նրանց հե-

տեսող մանուկների անվերջ թափորը։ Այդ հյուծված ուրվականներին մի շար ձեռք թափում է «անդունդի փոսը թափուր»։ Բայց բանաստեղծուհին լավատես է։ Նա նշմարում է շողացող արշալույսը, տեսնում սոված ու խոշտանգված գաղթական դրկյալների զվարթ ու ժպտուն դեմքերը, լսում ցնծության աղաղակները։

Հակառակ այն հուսահատվածների պնդումներին, թե՝ մի քանի տարի ևս և հայի անունն «իսպառ պիտի ջնջվի երկրի երեսին», Սիպիլը լցված էր անհուն հավատով դեպի իր ժողովրդի ապագան։ Նա որոշում է «...գործել ազգիս համար, գործել հայրենյացս համար, որոնց ապագային վերա հավատք ունիմ մեծ»[1]։

Սիպիլին հուզել է ոչ միայն իր ժողովրդի, այլև մյուս ժողովուրդների ճակատագիրը։ Բանաստեղծուհին գիտակցում էր, որ պատերազմը բարիք է բերում բուրժուազիային, տիրապետողին, ծառայում է իբրև հարստության, շահույթի աղբյուր։ Առաջին իմպերիալիստական պատերազմի ժամանակ գրած «Ագռավները» բանաստեղծության մեջ, նա խարազանում է պատերազմամոլներին, որոնք իրենց շահի համար գիտակցորեն քայքայում են մարդկային բյուրավոր կյանքեր։

Մանկության ու պատանեկության տարիներին ապրելով Սկյուտարի բարձունքի վրա ծովը զյութել է բանաստեղծուհուն։ Երիտասարդության մեջ նա երկար ունկնդրել է «լուռ թավալումը ջուրին» («Ծովուն», «Ծովուն հանդեպ»), որը խորասուզվում է դեպի անհունություն։ Բանաստեղծուհին ցանկանում է թափանցել ծովի գաղտնիքները.

Ո՜հ, կ՚ըղձայի նետվիլ խորքիդ մեջ անծիր,
Ծուփերուդ հետ անհունին մեջ թավալիլ.
Եվ անծանոթ գաղտնիքներուդ ունկնդիր՝
Լույս հեշտանքներդ բմպել կաթիլ առ կաթիլ,
Սուզվիլ, կարդալ, մութ խորշերուդ մեջ անցան,
Լուռ վեպերը սոսկավիթխար անդունդին,
Եվ օրորված միշտ հանկերգովը մահվան,
Սփոել զանոնք շիրիմներն ալ անդին։

Սիպիլի քերթվածները բնության, մարդկային կյանքի գաղտնիքներին են նվիրված։ Բնությունը բանաստեղծուհու ստեղծագործական ներշնչումների աղբյուրն է, որի ուժն ու հմայքը զգացվում է տարբեր մոտիվներով գրված երկերում։ Բանաստեղծուհին երգում է հրաշք բնության երևույթները, երգանքով սլանում անհաս երկնային բարձունքները («Երկինք»), ցանկանում է պարզել անհուն կապույտում սփռված գաղտնիքները։ Նա անձնավորում է բնությունը, օժտում մարդկային հատկություններով, խնդրում է փարատել թախիծը մարդկային դեմքի, որին «հնձում է օրենքին անաչառ ձեռքն երկաթե», որպեսզի եթերային մաքրության մեջ շողացող մարմինների նման մարդկային ճակատները էլ շողշողան։ Բայց զգալով նրա անկարեկցությունը և տեսնելով մարդկային հույզերի ու երազների խորտակումը, նա զայրույթի իր խոսքն է ուղղում երկնքին.

---

1 «Երկրագունդ», Պոլիս, 1886, էջ 202։

Սակայն, եթե մեր աշխարհին չես դուն սեր
Ու շանթարձակ ամպերեդ վար չես իջներ,
Թե չես տեսներ մեր կիրքերուն խոլ ալիք,
Թե մեր տենչեր քեզ կ՝երեան խաղալիք,
Փրշրե՛, ապա, մեր ըղձանքին խոլ թևեր,
Դեմքիդ վրրա ձրգե քողեր ու բսավեր
Եվ աշխարհի ցած իրերուն մեջ ելի
Քող ցրնորքներս, տենչս ու հոգիս թաղվին գելի,
Իսկ դուն, երկի՛նք, տարրերու մեջ անրգդա,
Իշխե՛, հավետ, ուր ոչ քրնար, ոչ սիրտ կա։

Բնությունն իմաստավորելով, բանաստեղծուհին համեմատություններով ու փոխարերություններով պատկերներ է ստեղծում։ Լուսեղեն ամպերը, որտեղ ապրում են բանաստեղծուհու երազանքները, «հովերուն բիրտ հարվածին տակ» վեր են ածվում անձրևի, ներծծվում հողում, ուր արցունքի հետ թաղվել են բանաստեղծուհու սրտի տենչանքները։ Երկուսն էլ դառնում են «զոհեր սիրտ անհուն պապակին», իսկ նրանց վշտերին անկարեկից վերևից ժպտում են արևն ու եթերը, փայփայելով նոր ամպեր, «նոր սարսուռներ ու երազներ ջինջ կապույտ»։

Բնությունը լի է անհատում գաղտնիքներով։ Բանաստեղծուհին ձգտում է պարզել բնության ուժն ու հմայքը, հարատևող գեղեցկությունները ու գաղտնիքները, բնության և մարդկային կյանքում եղած խոր հակասությունները։ Բնության անլուծելի գաղտնիքներից է ժամանակի հարատևությունը։ Ընկել, փշրվել են սեզ լեռներ, բայց հարատևում է ժամանակը («Ժամանակին»)։ Բանաստեղծուհու համար հանելուկ է՝ ո՞վ է տվել նրան այդքան ուժ։ Ժամանակը «անանուն էություն է», «ուրվական», «հերուսներու, հանճարներու... համայնակուլ գերեզման», բայց ժամանակից ավելի խոր ու անհուն բանաստեղծուհու հոգու ուժն է, որը պետք է ազատ սլանա, անցնի ապագա դարերը։

Սիպիլի պոեզիայում բնության պատկերները ինքնանպատակ չեն։ Բնության լուսավոր ու մռայլ գույներով բանաստեղծուհին արտահայտում է իր տրամադրությունները, պատկերավոր համեմատության մեջ դնում բնության երևույթները ու մարդկային կյանքը։ Մարդկային կյանքի ընթացքը համեմատում է առվակի հոսքի հետ («Առվակը»), որը սահում է մերթ ծիծաղով, մերթ կոծով, իսկ բերկրանքը, եռանդը, սերն ու գութը՝ փրփուրների, որոնք դիպվածով կարող են մերթ պոռթկալ, մերթ նիրհել։ Բանաստեղծուհին կապ է ստեղծում բնության և իր լիրիկական հերոսի հուզաշխարհի միջև։ «Պուրակի մթին բսավերներու տակ», «ուր զեփյուռներ ծաղիկներուն կայցելե» բանաստեղծուհու լիրիկական հերոսի հոգին գտնում է «հուշիկ մը անցյալեն»։ Սիպիլի պոեզիայում բնությունն ու սերը միահյուսված են։ Նկարագրելով բնության փոթորկումը, ծովի ալեկոծումը, երկնքի շանթերը («Կապույտ աղջիկը»), բանաստեղծուհին իր երգն ուղղում է ոչ թե բնությանը, այլ «ջերմ իղձերու բոցին տակ վառվող» կույսին և բնության պատկերների միջոցով ավելի խորացնում կույսի սիրո խորտակման հոգեբանական նկարագիրը։

Բանաստեղծուհու համար իդեալական են կյանքի գեղեցկությունները։ Իդեալն այն աստիճանն է («Իտեալ»), որին ձգտում է մարդկային միտքը, վիշտն ու խինդը։ Բանաստեղծուհու համար իդեալական է «կույսն անմա-

տույց բոց տենչերու տարափին», սուր համբույրը, սիրո երգը, ծաղկի բույրը...։ Սիպիլի էսթետիկական բարձր ճաշակը երևան է գալիս նաև գեղեցիկի ըմբռնման մեջ։ Գեղեցիկը և կյանքը բանաստեղծուհին չի դիտում որպես հակադիր կողմեր, այլ դիտում է միասնության մեջ։ Երբեմն էլ այն չգտնելով իրականության մեջ, ստեղծում է երևակայությամբ։ Իզուր չէ, որ մեր անվանի գրողներ՝ Ղ. Աղայանը, Հ. Թումանյանը, Վրթ. Փափազյանը Սիպիլին համարում են «...թրքահայ ամենահամակրելի, տաղանդավոր բանաստեղծուհին... Նրա բոլոր գրվածքները տոգորված են բարձրի, ազնիվի, գեղեցիկի և վսեմի ձգտումներով»[2]։

Սիպիլի քերթվածները լի են խոր սիրով դեպի մարդկային վիշտը։ Հոգեբանորեն է նկարագրված ցավից խելագարված մոր ապրումները («Հե՞ք հիմար կին»)։ Մյուս հերոսուհին՝ պարուհին, իր նազանքով դյութում է հանդիսատեսին («Պարուհին»), շատերը նախանձում են նրան. «Ո՜հ, ինչ հեշտ է կյանքը իրեն, ամբո՜ղջ պար», բայց պարուհու սիրտը խոցված է, նրա զավակը մեռնում է անկողնում, իսկ ստացած ծափերն, որոնցով վաստակում է ապրուստը, ապտակներն են կյանքի։ «Պարուհին» մարդու անհատական հոգեբանության և սոցիալական բնութագրության միասնական դրսևորումն է։

Սիպիլը մարդկային հոգու նուրբ զգացմունքների բանաստեղծուհի է։ Պատկերելով մարդու ներքին զգացմունքների աշխարհը, գրչով իսկ նա արտահայտում է զգացմունքների առաջացման արտաքին աշխարհը՝ մարդու սոցիալական միջավայրի պատկերը։ Բանաստեղծուհին հոգեբանորեն է վերլուծում մենաստանի երիտասարդ կույսի, կորցրած սիրո «գաղտուկ հեծքերու գողով երերացող» կնոջ, խելահեղ մոր պատկերները։

Ջահել է կույսը, ապրելու տենչանքով լի, այրող երիտասարդ հոգին ձգտում է դեպի աշխարհիկ կյանքը («Մենաստանի կույսը»)։ Նա խնդրում է «բոցեղ շղինչ մը», որ խառնի իր տենդոտ հոգուն, իսկ մենաստանի կույսերը, որոնք աղոթքով թմրեցրել են իրենց զգացմունքները գոչում են՝ «սեր է ատված», հավատացնում են՝ «միայն մահվան համար ենք հաստատված»։ Մենաստանի մայրապետը երիտասարդ կույսի կրծքից կախում է խաչ, բարձի տակ դնում է սաղմոս, բայց դրանք էլ անզոր են կույսի բաբախող սրտի հործանքի առջև, որպեսզի պահպանեն նրան «փորձանքներից» և զրկեն աշխարհում հասանելիք չնչին բաժնից։ Կույսի մեջ վառվում է վայելելու մեծ տենչանքը.

Այդ փորձանքներն ես կ'երազեմ անդադար,
Կյանքի բոլոր մեծ պայքարներն, հուրն անհուն,
Աշխարհի մեջ չնչին բաժինս իմ արդար
Եվ կը թողում երկինքն իրեն սուրբերուն։

Խոսելով այս բանաստեղծության մասին Գր. Զոհրապը գրում է. «...Սրտի անկեղծությունեն ճշմարիտ բանաստեղծությունը կը բղխի..., Վանքի մեջ մոռցված միանձնուհին՝ իր չնչին բաժինը պահանջելով կյանքեն, արդար բողոքի մը կը բերե ու կը հուզե մեզի...»[3]։

2 «Հայ գրողներ», Թիֆլիս, 1910, հ. II, էջ 810։
3 «Մասիս», Պոլիս, 1892, № 3966, էջ 179։

Այլ է ժանյակների սիրահար քաղքենուհու ճակատագիրը («Ժանյակները»)։ Իր ժանյակները ստվերելու երկյուղից է մեռնում պճնամոլ քաղքենուհին։ Կինն իր հոգեկան ապրումներով բարդ էակ է։ Նա իր անթիվ հրապույրներով ու հմայքով կարող է և՛ կյանք սփռել աշխարհում և՛ հմայել ու տանջել («Ինչո՞ւ... ինչո՞ւ...»)։ Բանաստեղծուհու լիրիկական հերոսուհին իր սիրուց խանդավառված պատանուց պահանջում է դույզ աչքերը («Գերագույն նվերը») և միայն ստանալուց հետո ապրում խորը ողբերգություն։

Սիպիլի քերթվածները խորն ապրած զգացմունքների, պարզ ու անկեղծ հույզերի անմիջական դրսևորումներն են, որոնք իրենց մեղմությամբ և զգացմունքների խորությամբ հմայել են ընթերցողներին։ Նրա պոեզիայում արտացոլվել է անդարձ կորցրած սիրո կսկիծը։ Այդպիսի գործեր բանաստեղծուհու խորապես ապրած անձնական զգացմունքների արդյունք են։ Սիպիլը երիտասարդ հասակում զրկվել է առաջին ամուսնուց, ապա երկրորդից։ Նա համեմատություններով ցույց է տալիս, որ մարդկային կյանքի և բնության շատ դեղեցկությունների նման, որոնք մոռվան, անհետացման վտանգի տակ ավելի են թանկանում, սիրո անջատումը, կործանումը («Անցնելու մոտ»), մարդու մոտ կրկնապատկում է զգացմունքները։ Վաղ շրջանի երկերում, եթե բանաստեղծուհին կյանքի նկատմամբ արտահայտվում է երբեմն լավատեսությամբ, գտնելով, որ կյանքի ժամանակավորության մեջ է քաղցրությունը, ապա նրա հուսահատ տրամադրությունները խորանում են անձնական կյանքի վերջին տարիներին («Ապրիլ»)։ Բանաստեղծուհին սիրուց սանջվող կնոջ սիրտը նմանեցնում է եկեղեցու խորանում ծխացող խունկի («Խունկը»), որն այնքան պետք է մխա, մինչև «լափվելով բոցեն տենչերուն մաքուր» հալվի, լուծվի, ի վերջո կարողանա ազատվել իր կուռ պատյանից։ Անսփոփանք վիշտ է սիրած էակի կործանումը։ Բանաստեղծուհին մտովի կառուցում է աստվածային պալատ, որտեղ զգացմունքները ապրում են ազատ, սերը դիցուհի է, սիրո մեծ խարույկում հոգիները վառվում են, բայց չեն հալվում։

Սիպիլի գործերում արտահայտվեցին նաև հուսահատ տրամադրություններ։ Բանաստեղծուհու ստեղծագործությունը զարգանում էր հակասական տենդենցով, որը պայմանավորված էր ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական կյանքում սրված հակասություններով։ Բանաստեղծուհու թախիծը երբեմն հասնում է հուսահատության նույնիսկ՝ կրոնական բարոյախոսության։

Չգտնելով թշվառության դեմ մաքառելու ուժն ու ուղին, բանաստեղծուհին ապրում է երազանքով։ Թողնելով իրական կյանքի վիշտն ու թշվառությունը, նա սլանում է «Ամպերեն վեր, աստղերեն վեր, կյանքեն վեր» («Աղվոր երազ»), երազանքով կառուցում է իդեալական աշխարհ, իսկ երբեմն էլ կասկածի տակ է առնում իր երազած եթերային մաքրությունը, խորհելով, որ այդ անասելի բարձունքները միայն հեռվից են այդքան գեղեցիկ ու մաքուր, բուռն ձգտում է դեպի կյանքը, ասրում պայքարի մտորումներով («Հնչյակ»).

Ո՜հ, պայքարի, տառապանքի հուզումներ տաք,
Ըզձեզ հոգվույս բոլոր թափով ես կը պաշտեմ.
Չի դուք միայն կյանքիս վայելքն ինձի կուտաք։

Բանաստեղծուհու տրամադրությունները նույնիսկ դառնում են մարտնչող։ Իթթիհատականների ռեակցիայի շրջանում նրա հերոսն է դառնում ազատու-

թյան մեջ ճախրող արտույտը, որն ազատության ձգտող հերոսի սիմվոլն է («Արտույտին»)։ 1911 թ. Սիպիլը գրեց «Խոսի՜լ» բանաստեղծությունը։ Երազող բանաստեղծուհու համար հավատքից, հույսից, «ըզմայլանքի պահերեն կույս» ավելի վեր են դառնում աղատ խոսելու վայելքը, գործելու և զոհվելու տենչերը։ Բանաստեղծուհին բավարարվում է ոչ միայն տիրող անհավասարության արտացոլմամբ, այլ որոնումների մեջ է։ Նրա տատանումներն ու ոգևորություններն արտահայտվում են հոգու տրտմություններով ու ցնծություններով։ Բանաստեղծուհին իր երջանկությունը որոնում է ուրիշների տառապանքն ու վիշտը ամոքելու մեջ։ Բայց «շահերով ըստոր լեցուն աշխարհում» նա չի գտնում մաքառելու ուժ, զգում է, որ անկարող է սրբել տառապողի արցունքի շիթը, որոշում է չլսել ոչինչ, կրկին հրաժեշտ է տալիս կյանքին, այնտեղ թողնելով սրտի վերքերը, երբեմն էլ այդ հրաժարումը փոխում է գթաշարժ աղերսանքով, ցանկանում է ապրել երալանքով, սպասումով։ Նա պատրաստ է ամպամած երկնքից, «ամպրոպեն, շանթեն ալ գութ մուրալ», անձնատուր լինել կյանքին, հավատալ տիեզերքի բարությանը, «բոցերում գեհենի հովաններ տեսնել զով» և «ժպտիլ անվրդով արյուն հոսի երբ սրտեղ» միայն ապրել։ Սա մի ընդվզում է կյանքի դեմ, կյանք, որը հեղեղված է թշվառությամբ։ Բանաստեղծուհին վերապրում է տառապողի ցավեր, բայց չի տեսնում հասարակական շարիքից ազատվելու ուղին, զգալով, որ անկարող է «պահ մը վերջ տալ թշվառության հորդ հեղեղին», ցանկանում է «գեթ մոռնալ» «մարդոց վիշտերը» («Մոռնալ»)։

Սիպիլն ունի նաև ռեալիստորեն գրված էջեր, բայց նրա գրական ուղղությունը ռոմանտիկական է։ Մի առիթով բանաստեղծուհին գրում է. «Ես սիրած եմ միշտ ռոմանտիկ գրականությունը, և ինչ որ կ'ուզեն ըսեն, կը մտածեմ թե կանանց մեծ մասին համար, գոնե իմ ճանչցածներուս, ռոմանտիկության մեջ է իրականությունը»[4]։

Լինելով արևմտահայ աշխարհաբարի մշակման կարևոր դեմքերից և ջերմ պաշտպաններից մեկը, նրբաճաշակ բանաստեղծուհին արվեստագետի հմտությամբ օգտագործեց մեր լեզվի հարստությունը, մշակեց՝ քնարերգության լեզուն ու ոճը։

Սիպիլի բանաստեղծությունները զգացմունքների արտահայտչականությամբ ու նրբությամբ յուրահատուկ են։ Խոսելով պոեզիայի մասին, նա գտնում է, որ յուրաքանչյուր գրող իր գործերում պետք է դնի իր հոգու գույնը, նկարագրի ցոլքը, ճաշակի հմայքը։ Բանաստեղծուհին խոսքային երաժշտությունը վեր է համարում նվազագույն երաժշտությունից, իսկ դրա գլխավոր պայմանը համարում է տաղաչափության ներդաշնակությունը։ Զարգացնելու համար բանաստեղծության հնչյունական կողմը, նա օգտագործել է հանգավորման տարբեր ձևեր։ Վրթանես Փափազյանը բնութագրելով Սիպիլի պոեզիան գրում է. «...Սիպիլի ոճը, լեզուն, հանգերի ճոխությունն ու արտահայտությունների հարստությունը՝ առհասարակ կատարյալ են»[5]։

Տպավորիչ ու ներգործուն են բանաստեղծուհու գծած պատկերները, հարուստ համեմատություններով։ Սիպիլն իր ինքնատիպ արվեստով և հարուստ լեզվական կուլտուրայով ստեղծեց արժեքավոր ու մնայուն գործեր։ Արևմտահայ-

4 «Լույս», Պոլիս, 1903, էջ 642։
5 Վ. Փ ա փ ա զ յ ա ն, Պատմություն հայոց գրականության, Թիֆլիս, 1910, էջ 741։

պոեզիայում Սիպիլը շարունակեց Դուրյանի ճանապարհը, բայց երգեց ոչ դուրյանական ցասման ուժով, Սիպիլն ստեղծագործեց Դուրյանից մեկ և կես տասնամյակ հետո, երբ ազգային կյանքում ավելի սրվել էին հակասությունները, մոլեգնում էր տաճկական ռեակցիան։ Ռոմանտիկ բանաստեղծուհու համար հեշտ չէր բարձրանալ իր միջավայրից, որը լոնկված էր հուսալքման և իրականությունից փախուստի տրամադրություններով։

Դեռ 1892 թվականին, արդեն ճանաչում գտած բանաստեղծուհու, հասարակական գործչի մասին Գրիգոր Զոհրապը գրում է. «...իր անհատական կյանքով պարծանքն է իր սեռին և իր մեծ տաղանդովը՝ մեր բոլոր գրականության...։ Գրականության մեջ ինքը պիտի մնա ճշմարիտ ներշնչյալ կինը, որուն պատգամները պիտի սրտապնդեն մեզ՝ որ այնքան կարոտ ենք քաջալերության անույշ ձայնին»[6]։

Л. Галстян

ПОЭЗИЯ СИПИЛ

Резюме

В статье «Поэзия Сипил» мы имели целью представить в общих чертах характерные черты поэзии западноармянской поэтессы Сипил (Забел Асатур).

Сипил — автор романов, рассказов, новел, драм, стихотворений, но признана она как поэтесса. Ее первый сборник стихотворений был напечатан в 1902 г. в Константинополе. Затем были напечатаны сборники стихотворений в 1935 г. в Ереване, в 1939 г. в Стамбуле и в 1956 г. в Венеции.

В работах Сипил отразилась полная горечи жизнь армян-странников, дана чудовищная картина резни армян в Турции.

Живя в удушливых условиях турецкой реакции, Сипил пережила сильное духовное разочарование, но не потеряла веру в светлое будущее своего народа. Она с радостью приняла весть об установлении Советской власти в Армении.

Сипил — поэтесса нежной человеческой души. Ее стихи—непосредственное отражение пережитых глубоких эмоций. В ее стихах картины природы не являются самоцелью. Ими выражаются человеческие переживания, создавая глубокие содержательные образы.

В стихотворениях Сипил отразилось настроение разочарования. Не находя сил для борьбы с угнетением, она стала жить мечтой и ожиданиями. Для поэтессы-романтика не легко было подняться выше своей среды, которая была охвачена настроением разочарования и желанием уйти из действительности.

Сипил своим своеобразным искусством и богатой языковой культурой создала ценные труды.

---

6 «Մասիս», Պոլիս, 1893, № 3966, էջ 180։